«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N5

25.07.2025թ. գ. Ոսկեվան

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 13-րդ կետով, 23-րդ կետի 17-րդ ենթակետով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝

1. Սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության անդամավճարի գանձման կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահ Բ. Սաֆարյանին՝ ապահովել սույն որոշման տեղադրումը կայքում ու այլ միջոցներով հանրայնացումը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ Ա. Գևորգյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ Ֆ. Ռոնդյան

25.07.2025թ.

Հավելված

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N5 որոշման

ԿԱՐԳ
«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) անդամավճարի գանձման կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

II. ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Կազմակերպության Կանոնադրության 14-րդ կետով սահմանված անդամավճար վճարելու պարտականությանը Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն հայտնած անձը ծանուցվում է նախապես, որի մասին նշում է կատարում իր դիմումի մեջ:

3. Կազմակերպության անդամները պարտադիր կամ կամավոր վճարվող անդամավճարները փոխանցում են Կազմակերպության բանկային հաշվեհամարներին՝ նպատակ դաշտում, այլ վավերապայմանների հետ միասին, նշելով վճարում կատարողի անուն, հայրանուն, ազգանունը:

4. Վճարված անդամավճարների և անդամավճար չվճարող անդամների մասին տեղեկատվությունը Կազմակերպության նախագահը ներկայացնում է Խորհրդին ու Ընդհանուր Ժողովի նիստերում:

5. 6 ամիս անընդմեջ անդամավճար չվճարող Կազմակերպության Կանոնադրության 14-րդ կետով սահմանված արտոնություն չունեցող Կազմակերպության անդամը կարող է հեռացվել Կազմակերպության անդամությունից:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ Ի. Գևորգյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ Ս. Բաղդասարյան